ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2021**թ. նոյեմբերի 3-ին, ժամը՝ 12:00-ին** ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ, **ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4 ՀԱՍՑԵՈՒՄ**

ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

«Վ.Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի սեփականության իրավունքով պատկանող գույքը

Հ/Հ	Լոտի հերթական համարը	Գույքի (լոտի) անվանումը	Գույքի (լոտի) գտնվելու վայրը	Գույքի (լոտի) վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ	Լոտի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/	Նախավճարը /ՀՀ դրամ/	Մասնակցության վճարը /ՀՀ դրամ/
1	1	**S/մ՝ SAMAND CNG 1.8 I**	ք.Երևան, Թումանյան 42	Թող.տարեթիվ՝ 2008թ., պ/հ.՝ 823 OU 64, ն/հ.՝ KAAC21CB58F703190, թափքը՝ սեդան, վազքը՝ 174616 կմ, գույնը՝ մոխրագույն մետալիկ, վիճակը՝ բավարար	555 600	27 780	11 006

** Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ **«Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10):***

** **Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը (ժամը՝ 17:00-ն) մուծել են նախավճար և Կազմակերպչի կողմից ստացել մասնակցի վկայական (տոմս):***

** Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:*

*• **Մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչև աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ ք.Երևան, Թումանյան 42 հասցեում զանգահարելով Յուրի Զաքարյանին՝ (043) 407 409 հեռախոսահամարով, յուրաքանչյուր երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-17:00: Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում աճուրդի ներկայացված լոտի (լոտեր) որակի համար: Աճուրդում գործում է հետևյալ սկզբունքը՝ «աճուրդի մասնակիցը «տեսել-համաձայնել է»:***

****Ուշադրություն՝ աճուրդի ընթացքը տեսաձայնագրվում է, դրա օրինականությունը ապահովելու նպատակով:***

Աճուրդի մասնակցության պայմանները՝

*- Աճուրդին կարող են մասնակցել այն անձինք, ովքեր վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ **սեփականության իրավունք**, ինչպես նաև սահմանված ժամկետում Կազմակերպչին են ներկայացրել **անհրաժեշտ փաստաթղթեր**:*

Աճուրդի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

*- Ֆիզիկական անձանց համար՝ նույնականացման քարտի պատճենը կամ **անձնագրի պատճենը**:*

*- Իրավաբանական անձանց համար՝ պետական գրանցման վկայականի պատճենը, անհրաժեշտության դեպքում՝ նաև գույք ձեռք բերելու մասին ընկերության ընդհանուր ժողովի որոշումը **և կանոնադրությունը,***

*- Նախավճարի վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը**), մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ** 900018002171, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի նախավճար**՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը: **Նախավճարը հաղթող մասնակցի համար համարվում է գույքի վաճառքի գնի մաս և չի վերադարձվում:***

*- Մասնակցության վճարումը հաստատող անդորրագիրը (յուրաքանչյուր նախընտրած լոտի համար, **պարտադիր նշելով մասնակցի անունը և ազգանունը),** մուտքագրման հաշիվն է՝ ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության **թիվ 900018002981**, ստացող՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, վճարման նպատակը՝ **աճուրդի մասնակցության վճար**՝ պարտադիր նշելով գույքի սեփականատիրոջ անվանումը, լոտի հերթական համարը: **Մասնակցության վճարը գույքի (լոտի) գնի մեջ չի ներառվում և անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում:***

- Հայտատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիր (եթե աճուրդին ներկայանում է լիազորված անձը):

** **Վերը նշված փաստաթղթերի առկայության դեպքում Կազմակերպիչը մասնակցին տրամադրում է մասնակցի վկայական (տոմս):***

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք և այդ անձանց գործողությունների վարքագծի կանոնները՝

*- Աճուրդին կարող են ներկա գտնվել **դիտորդներ**՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճարը՝ 2000 **ՀՀ դրամ:***

- Դիտորդի տոմսերը վաճառվում են՝ «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ում (հասցեն՝ ք.Երևան, Զաքիյան 10), իսկ աճուրդի օրը՝ Պետական գույքի կառավարման կոմիտեում (հասցեն՝ ք.Երևան Տիգրան Մեծ 4):

- Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք աճուրդի անցկացման դահլիճում զբաղեցնում են առանձին նստատեղեր:

*- **Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանն ու ենթարկվել աճուրդի կանոնակարգով սահմանված կանոններին:***

Աճուրդի անցկացման և աճուրդում հաղթողին որոշելու կարգը՝

*- Աճուրդի մասնակիցների **անձնագրի և մասնակցի վկայական(ներ)ի** առկայությունը պարտադիր է, լիազորված անձի դեպքում՝ նաև **լիազորությունները հաստատող փաստաթղթերը**:*

- Նախքան աճուրդի սկսվելը Կազմակերպիչը գրանցում է մասնակիցներին, ստուգելով նրանց ինքնությունը, լիազորությունները հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված այլ փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցին, ներկայացված մասնակցի վկայականի (տոմսի) համարին համապատասխան, տրամադրում է քարտեր:

- Աճուրդը բացվում է հայտարարությամբ: Հայտարարության մեջ նշվում է աճուրդում վաճառվելիք լոտի անվանումը և նկարագրությունը, դրա մեկնարկային գինը, լոտի նկատմամբ սահմանափակումները, ինչպես նաև աճուրդի անցկացման ձևը, այդ թվում՝ գնային հայտեր ներկայացնելու կարգը:

- Աճուրդը անց է կացնում աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը:
Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ (բարձրացնելով իր մասնակցության քարտը), որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույն հավելման (քայլի) չափով:
- Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից:
- Եթե մի քանի մասնակից միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանության միջոցով որոշում է հաղթող մասնակցին:
- Լոտի (լոտերի) վաճառքից հետո աճուրդավարի կողմից հաղթող համարված մասնակիցը ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը և տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարվում է ավարտված:

Լոտի գնի վճարման կարգը, ժամկետները և նախավճարի վերադարձման կարգը՝
- Աճուրդում գոյացած գինը, նվազագույն աշխատավարձի հինսնապատիկի չափը չգերազանցելու դեպքում, վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրության ստորագրման օրը, իսկ գերազանցելու դեպքում՝ արձանագրության ստորագրման օրվանից սկսած 10 ***օրվա*** *ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով:*
- Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է վճարման հանձնարարագիր, ընդ որում նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:
- Աճուրդում հաղթող ճանաչված անձը վճարման հանձնարարագրում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է և վճարման անդորրագիրը ներկայացնում Կազմակերպչին:
- ***Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում, իսկ աճուրդը համարվում է չկայացած: Այս դեպքում լոտ(եր)ը վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:***
- ***Մասնակից չներկայանալու կամ ներկայացած մասնակիցներից հաղթող ճանաչված անձ չհամարվելու դեպքում լոտը (լոտեր) վաճառելու նպատակով կազմակերպվում է նոր աճուրդ՝ նույն պայմաններով:***
- Կազմակերպիչը աճուրդը կայանալուց կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

** **Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք դիմել «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ, հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 10 կամ զանգահարել՝ 010-52-63- 32, 043-06-07-16 հեռախոսահամարներով, իսկ աճուրդի անցկացման կանոնակարգին ծանոթանալու համար կարող եք նաև այցելել հետևյալ հղումով՝ //www.arlis.am/DocumentView.aspx?docid=121990:***

Ծանուցում.
«Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 9-րդ հոդված.
1. Այն պայմանները և տեղեկությունները, որոնք նշվել են աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ, ենթակա չեն փոփոխման, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխություններ են տեղի ունեցել աճուրդով վաճառվելիք լոտի նկատմամբ սահմանափակումների մասով կամ փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված լոտի ֆիզիկական վիճակի հետ, կամ աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նախատեսվել է փոփոխությունների հնարավորությունը:

Սույն մասով նախատեսված դեպքում աճուրդի կազմակերպիչը պարտավոր է մինչև նախորդող երեք օրը կատարել աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխություններ և լրացումներ (այսուհետ՝ հրապարակային ծանուցման փոփոխություն) այն ձևով, ինչպես կատարվել էր աճուրդի մասին հրապարակային ծանուցումը:
2. Եթե հրապարակային ծանուցման փոփոխությունը չի կատարվել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում և կարգով, ապա աճուրդի կազմակերպիչը կրում է մասնակիցների կրած իրական վնասների ռիսկը:
3. Աճուրդի մասին հրապարակային ծանուցում կատարելուց հետո թույլատրվում է հրապարակային ծանուցման փոփոխությամբ կատարել ցանկացած լրացում, եթե դրանով չեն փոփոխվում աճուրդի մասին հրապարակային ծանուցման մեջ նշված էական պայմանները:

Քրեական օրենսգրքի 196 հոդված.
Հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելը, որը խոշոր վնաս է պատճառել գույքի սեփականատիրոջը, սակարկություններ կազմակերպողին, գնորդին կամ այլ տնտեսավարող սուբյեկտին՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով: